

## ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ\*

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ  
ash.haam@gmail.com

## ԽԱՂԽԱՂԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

**Քանալի բառեր**<sup>1</sup> Խաղխաղ, Լոփնաս, Աղուէ, Աղստև, Տավուշ, Կուր, Գարդման:

### Ներածություն

Հայ պատմագրության մեջ քանիցս հիշատակվող պատմական Խաղխաղը գտնվել է Մեծ Հայքի Ուտիք աշխարհում: Այդ քաղաքն առավելապես հայտնի է իբրև մի բնակավայր, որի մերձակայքում 450 թ. կայացել է 450–451 թթ. ժողովրդա-ազատագրական պատերազմի ժամանակ հայկական և պարսկական զորքերի միջև երկու խոշոր ճակատամարտերից առաջինը<sup>2</sup>: Այն, ինչպես քաջ հայտնի է, ավարտվել է սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորած հայկական զորքի փայլուն հաղթանակով:

Գլխավորապես այդ հանգամանքով պայմանավորված՝ Խաղխաղի տեղորոշման հարցը տասնամյակներ շարունակ եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում:

### Խաղխաղի տեղադրությունը

Խաղխաղ քաղաքի տեղորոշմամբ զբաղված որոշ ուսումնասիրողներ վստահաբար այն տեղակայել են Ադրբեջանի Հանրապետության Թովուզի շրջանի Յանխլի (Խալխալ, Խալխանլը, Խիլխինա) գյուղի տեղում: Նման տեղորոշման հիմքում ընկած է Խաղխաղի մերձակայքով հոսող Լոփնաս գետի հետ Ձազամ գետի նույնացումը<sup>2</sup>: Ղ. Ալիշանն էլ Լոփնասը նույնացրել է կամ

\* Հոդվածը ներկայացվել է 07.05.21, գրախոսվել է 17.05.21, ընդունվել է տպագրության 02.08.21:

<sup>1</sup> Տե՛ս Եղիշեի 1957, 75, Ղազարայ Փարպեցույ, 1982, 150, Մովսէս Կաղանկատուացի 1988, 114:

<sup>2</sup> Տե՛ս Sant-Martin 1818, 88–89, Բարխուտարեանց 1895, 57–58, Եղիշեի 1957, 207, ծան. 94, Հարությունյան 1978, 715, Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 1989, 715, Հակոբյան, Մելիք-Բախշյան 1991, 475, Կարապետյան 2004, 299:

### Խաղխաղի տեղադրության շուրջ

Ձագամի, կամ էլ նրա վտակներից մեկի հետ<sup>3</sup>: Այսպիսով, ըստ այս հեղինակների, Խաղխաղը գտնվել է Ուտիքի Գարդման գավառում, քանի որ այդտեղով Ձագամի հոսելը կասկածից վեր է:

Սակայն բանն այն է, որ հայկական ու վրացական աղբյուրներում զանազան տարընթերցումներով՝ Ձագամ, Ջակամ, Ձեգամ, Ջեգամ, Սագիմ և անգամ Բերդուջի անվամբ<sup>4</sup> հիշատակված Ձագամը երբեք Լուինաս չի կոչվել: Բացի այդ, որ տվյալ պարագայում շատ կարևոր է, Խաղխաղը Գարդմանում գտնվելու դեպքում այդ գավառը պետք է լիներ արքունապատկան տիրույթ և կառավարվեր թագավորի նշանակած կառավարչի կողմից: Մինչդեռ Գարդմանն առանձին իշխանություն էր և պատկանում էր իր ժառանգական տեր իշխանին:

Խաղխաղի տեղադրությանն անդրադարձողների մի մասն էլ այն տեղակայել է Ուտիքի Աղուէ գավառում՝ Աղստե գետի ափին: Ս. Երեմյանն Աղստեղ նույնացնելով Լուինասի հետ, սկզբում գրել է, որ այդ քաղաքն ամենայն հավանականությամբ նույնական է դրա ափին գտնվող Լալա (Խիլխիլա, Խիլխինա) կոչված բնակավայրի հետ<sup>5</sup>: Հետագայում նա հպանցիկ կրկին անդրադառնալով Խաղխաղի տեղադրությանը, գրել է, որ այն պետք է փնտրել Ադրբեջանի Հանրապետության Ղազախ քաղաքի մոտերքում<sup>6</sup>:

Վ. Խաչատրյանն այդ բնակավայրը նույնացրել է Ղազախի հետ<sup>7</sup>: Ֆ. Մամեդովան Խաղխաղը տեղադրել է «Ժամանակակից Ղազախի գոտում»<sup>8</sup>, իսկ Ա. Եղիազարյանը՝ Աղստեի աջ ափին<sup>9</sup>: Խաղխաղը սկզբում Ձագամ գետի ափին տեղակայած Բ. Հարությունյանը հետագայում վերանայել է այդ տեսակետը: Նա համերաշխել է Խաղխաղը «ներկայիս Ղազախ քաղաքի տեղում կամ մերձակայքում» տեղադրող ուսումնասիրողների հետ<sup>10</sup> և այն զետեղել Աղստեի աջ՝ արևելյան ափին<sup>11</sup>:

<sup>3</sup> Տե՛ս Ալիշան 1856, 84:

<sup>4</sup> Տե՛ս Картлис Цховреба 2008, 337:

<sup>5</sup> Еремян 1939, 85

<sup>6</sup> Երեմյան 1969, 21: Հեղինակը հոդվածին կից քարտեզում Ղազախը նշել է Լալա (Խաղխաղ) ձևով: Տե՛ս նաև՝ Հայ ժողովրդի պատմություն 1984, Еремян 1951, 55:

<sup>7</sup> Տե՛ս Хачатрян 1991, 130:

<sup>8</sup> Мамедова 2005, 353:

<sup>9</sup> Տե՛ս Եղիազարյան 2010, 99:

<sup>10</sup> Հարությունյան 2007, 98, Арутюнян 1979, 28:

<sup>11</sup> Տե՛ս Հայաստանի պատմության ատլաս 2004, 49, 51, Հայաստանի ազգային ատլաս 2008, 34:

## Շահնագարյան Ա.

Ընդ որում, Բ. Հարությունյանը, Լուինասի ու Աղստևի նույնացումը պատմական ճշմարտությունից հեռու դիտելով, առավել հավանական է համարել, որ այն նույնական է ոչ թե Աղստևի, այլ դրանից արևելք Կուր հոսող Հախում գետի հետ, տարօրինակ համարելով, որ «Աղստև գետի անունը կարող էր մի ինչ-որ ժամանակ փոխարինվել Լուինասով և այնուհետև վերականգնվել»<sup>12</sup>:

Լուինասն արդեն անվարան Հախումի հետ է նույնացրել Ա. Հակոբյանը: Նա նույնիսկ Խաղխաղի ճակատամարտը Լուինասի ճակատամարտ է կոչել և Խաղխաղը տեղորոշել Կուր գետի աջ ափին<sup>13</sup>: Տ. Գևորգյանն էլ Լուինասի ու Աղստևի նույնացումը բավարար չափով հիմնավորված չի համարել և ենթադրել է, որ Խաղխաղը «պետք է գտնվեր ավելի հարավ»<sup>14</sup>: Թե հարավ ասելով հետազոտողն ինչ է հասկացել՝ չի որոշակիացրել:

Խնդրո առարկա Խաղխաղի տեղակայման հարցը վերջինն արծարծել է Ա. Այվազյանը: Նա այդ բնակավայրը Ձագամի ափին գտնվելու տեսակետը մերժելով, գրել է հետևյալը. «Ս. Տ. Երեմյանը ճիշտ է Լուինասը նույնացրել Աղստևի, իսկ Խաղխաղը՝ ժամանակակից Խիլխինա գյուղի հետ»<sup>15</sup>: Նկատենք, որ Խիլխինան ընկած է Աղստևի ձախ ափին:

Արգիշտի I-ի (Ք.ա. 786–764) Խորխոդյան տարեգրության մեջ (Ք.ա. 782 թ.) Ալիշտու=Աղստև քաղաքի և XIII դ. Ստեփանոս Օրբելյանի կողմից նույնանուն բնակավայրի հիշատակումները<sup>16</sup> հիմնավորում են Աղստևը Լուինասի վերանվանվելու անհնարինության շուրջ Բ. Հարությունյանի վերը բերված պնդումը: Ինչ վերաբերում է Խաղխաղի և Խիլխինայի՝ հնչյունական առումով մոտ լինելու հիմամբ նույնացմանը, ապա դա նման մոտեցման համար բավարար հիմք չէ: Ինչպես արդեն տեսանք, Ձագամի ափին ևս նույնանուն բնակավայր կա, ինչը բնավ չի նշանակում, որ այն Խաղխաղի հետ նույնական է: Ընդ որում, Ս. Երեմյանն այդ բնակավայրերը որոշակի վերապահությամբ է նույնացրել, ինչը բնավ պատահական չէ:

Խաղխաղի ճակատամարտը և դրան նախորդած անցքերն առավել ստույգ ներկայացրած Եղիշեի տված տեղեկություններից հետևում է, որ նախքան Վարդան Մամիկոնյանի գլխավորած հայկական զորքի գալն Աղվանքում գտնված պարսկական բանակը Կուրը գետանցել էր ու տեղակայվել «մերձ ի

<sup>12</sup> Հարությունյան 2007, 100:

<sup>13</sup> Հակոբեան 2009, հավելված քարտեզ, Հակոբեան 2020, 92:

<sup>14</sup> Գևորգյան 2013, 135:

<sup>15</sup> Айвазян 2016, 128–129 և հտ.:

<sup>16</sup> Меликишвили 1960, Ստեփաննոս Օրբելեան 1910, 397:

### **Խաղխաղի տեղադրության շուրջ**

սահմանս Վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի»<sup>17</sup>, որպէսզի կանխի նրա մուտքը բուն Աղվանք: Ինչ վերաբերում է հայոց զորքին, ապա այն «ի գետղն, որ կոչի Խաղխաղ երկիրն Աղուանից»<sup>18</sup> էր հասել «ընդ սահման Վրաց»<sup>19</sup>, այսինքն Հայաստանի 387 թ. բաժանման հետևանքով Վիրքի կազմում ներառված Գուգարաց բղէշխության տարածքից և, անպայման, Աղստևի ստորին հոսանքի հովտով, որտեղով այդ գետի աջ ափով հիմա էլ անցնում է Հայաստանի ներքին շրջանները Կուրի դաշտավայրի հետ կապող, ճիշտ է, այժմ չգործող ուղին<sup>20</sup>:

Ասել է, թե հայոց զորքը նախքան Խաղխաղի մոտ հասնելը գետանցել էր Աղստևը, որի աջ ափին էր գտնվում այդ քաղաքը: Ճակատամարտի ընթացքում հայոց ուժերը հմուտ մարտավարության ու խիզախության շնորհիվ պարսիկներին հաջողությամբ «փախստական առնէին մինչև յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն դարիքն Լոփնաս գետոյ»<sup>21</sup>: Ընդ որում, Եղիշէի, նրանից բառացիորեն քաղագրած Մովսէս Կաղանկատվացու և Ղազար Փարպեցու հաղորդումների համադրումից հստակ հետևում է, որ պարսիկները խուճապահար նահանջում էին Կուրի ու նրա վտակ Լոփնասի գետախառնուրդի ուղղությամբ, որպէսզի Կուրն անցնելով հետապնդողներից փրկվեն<sup>22</sup>: Եվ քանի որ Խաղխաղի՝ Կուրից հարավ գտնվելը վիճարկման ենթակա չէ, իսկ Լոփնասը, որի նույնացումն Աղստևի հետ ապացուցելի չէ, դեպի Կուր է հոսում նրանից արևելք, ապա պարսիկները մարտադաշտից դեպի Կուր են փախել հյուսիս-արևելյան ուղղությամբ: Հետևաբար, Խաղխաղը պետք է փնտրել ոչ թե Աղստևի ափին, այլ՝ Լոփնաս=Հախումի ստորին հոսանքում, այդ գետի ձախակողմում ու ոչ թե Աղուէ, այլ՝ Տավուշ գավառում:

#### **Եզրակացություն**

Խաղխաղ քաղաքի տեղադրության շուրջ հայտնվել են տարբեր կարծիքներ: Ուսումնասիրողների մի մասը Լոփնաս գետը նույնացնելով Ձազամ գետի հետ, այն նույնացրել է Ադրբեջանի Հանրապետության Թովուզի շրջանի Յանխլի գյուղի հետ: Ոմանք էլ Լոփնասն Աղստև գետը համարելով կարծել

<sup>17</sup> Եղիշէի 1957, 75:

<sup>18</sup> Ղազարայ Փարպեցոյ 1982, 150:

<sup>19</sup> Եղիշէի 1957, 74:

<sup>20</sup> Հմմտ. Հարությունյան 1974, 92:

<sup>21</sup> Եղիշէի 1957, 76:

<sup>22</sup> Տե՛ս Եղիշէի 1957, 75–76, Մովսէս Կաղանկատուացի 1988, 114–115, Ղազարայ Փարպեցոյ 1982, 152–154:

## **Շահնագարյան Ա.**

են, որ Խաղխաղը գտնվել է դրա ափին: Որոշ հետազոտողներ էլ զգուշորեն կամ անվերապահորեն Լուինասն Աղստևից արևելք Կուր հոսող Հախում գետի հետ նույնացնելով գտել են, որ Խաղխաղը պետք է տեղադրել այդ գետի ափին:

Խաղխաղի ճակատամարտի մասին սկզբնաղբյուրների հաղորդումների համադիր քննությունից հստակ հետևում է, որ խնդրո առարկա քաղաքը պետք է փնտրել ոչ թե Աղստևի ափին, այլ՝ Լուինաս=Հախումի ստորին հոսանքում, այդ գետի ձախակողմում, ընդ որում, ոչ թե Աղու, այլ՝ Տավուշ գավառում:

## **ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Ալիշան Ղևոնդ** 1856, Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, Սուրբ Ղազար, 105 էջ:

**Բարխուտարեանց Մ.** 1895, Արցախ, Բագու, տպարան Արօր, 208 էջ:

**Գևորգյան Տ.** 2013, Հայոց Արևելից կողմերը ըստ «Աշխարհացոյց»-ի, թեկնածուական ատենախոսություն, Երևան, անտիպ, 157 էջ:

**Եղիազարյան Ա.** 2010, Արաքական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, Երևան, ԵՊՀ հրատ. 186 էջ:

**Եղիշէի** 1957, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 224 էջ:

**Երեմյան Ա.Տ.** 1969, Էրեբունի-Երևանը միջազգային առևտրի մայրուղիների վրա, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 12, Երևան, էջ 16–25:

**Կարապետյան Ս.** 2004, Հյուսիսային Արցախ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 583 էջ:

**Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ.Տ., Բարսեղյան Հ.Խ.** 1989, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 991 էջ:

**Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ.Տ., Բարսեղյան Հ.Խ.** 1991, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, ԵՊՀ հրատ., 991 էջ:

Հայ ժողովրդի պատմություն 1984, հ. II, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 691 էջ:

Հայաստանի պատմության ատլաս 2004, Ա մաս, հեղինակ Բ.Հ. Հարությունյան, Մակմիլլան Արմենիա ՀՀ ՓԲԸ, 193 էջ:

Հայաստանի ազգային ատլաս 2008, հ. Բ, Տիգրան Մեծ հրատ., 263 էջ:

**Հարությունյան Բ.** 1978, Խաղխաղ, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆ կոմբինատ, 719 էջ:

**Հարությունյան Բ.** 2007, Խաղխաղի ճակատամարտը (450 թ.), Հայկական բանակ, թիվ 4, Երևան, էջ 95–103:

**Ղազարայ Փարպեցոյ** 1982, Պատմություն Հայոց, Թուրթ առ Վահան Մամիկոնեան, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մախաթյանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 537 էջ:

## Խաղխաղի տեղադրության շուրջ

**Մովսէս Կաղանկատուացի** 1988, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 242 էջ:

**Յակոբեան Ա.** 2009, Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտություններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, Մխիթարեան հրատարակչատուն, 476 էջ:

**Յակոբեան Ա.** 2020, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղուանքում եւ Հայոց Արևելից կողմանքում անտիկից մինչև ժԳ դար (պատմա-աղբյուրագիտական քննություն), Երեւան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 439 էջ:

Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սինեաց **Ստեփաննոսի Օրբէլեան** 1910., Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպ. օր. Ն. Աղանեսցի, 618 էջ:

**Айвазян Армен** 2016, Армяно-персидская война 450–451 гг. Кампания и сражения, Ереван, изд. «Воскан Ереванци», 516 с.

**Арутюнян Б.А.** 1979, Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Егише, Кавказ и Византия, I, Ереван, с. 19–35.

**Еремян С.Т.** 1939, Торговые пути Закавказья в эпоху Сасанидов по Табула Pantingerian, Вестник древней истории, № 1, Москва, с. 79–97.

**Еремян С.Т.** 1951, Народно-освободительная война армян против персов в 451–450 гг. (К 1500-летию годовщины), Вестник древней истории, № 4, Москва, с. 41–60.

**Картлис Цховреба** 2008, История Грузии, Тбилиси, изд. «Артануджи», 454 с.

**Мамедова Ф.** 2005, Кавказская Албания и албаны, Баку, Центр исследований Кавказской Албании, 800 с.

**Меликишвили Г.А.** 1960, Урартские клинообразные надписи, Москва, изд. АН СССР, 504 с.

**Хачатрян В.Н.** 1991, Вопросы военного искусства в книге Егише «О Вардане и войне армянской», Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 1, Երևան, էջ 126–139:

**Saint-Martin M.J.** 1818 Memoirres historiques de L'armenie, t. I, «De L'imprimerie rocale», Paris, 450 էջ:

## О ЛОКАЛИЗАЦИИ ХАЛХАЛА

ШАХНАЗАРЯН А.

### Резюме

**Ключевые слова:** Халхал, Лопнас, Ахум, Агстев, Тавуш, Кура, Гардман.

В окрестностях города Халхал в 450 г. произошло сражение между армянскими и персидскими войсками. Определяемый этим сражением воп-

рос локализации Халхала оставался в эпицентре внимания исследователей. Часть исследователей, идентифицируя реку Лопнас (у берегов которой произошло вышеназванное сражение) с рекой Дзегам, локализовывали Халхал в окрестностях этой реки. Ряд авторов, отождествляя Лопнас с рекой Агстев, локализовывали Халхал на месте г. Казах, расположенного на берегу р. Агстев, либо в ее окрестностях.

Новые исследования явствуют о том, что правы те исследователи, которые, идентифицируя р. Лопнас с р. Ахум, локализуют Халхал на берегу р. Ахум.

## ON THE TOPOGRAPHY OF KHAGHKAGH

SHAHNAZARYAN A.

### Summary

**Key words:** Khaghkagh, Lopnas, Aghue, Aghstev, Tavush, Kur, Gardman.

In 450 a battle took place between the Armenian and Persian armies in the vicinity of Khaghkagh city. It was due to this that the process of locating Khaghkagh attracted the researchers' attention. Some of them identifying the river Lopnas (on the bank of which the battle took place) with the river Dzegam have located Khaghkagh in the vicinity of that river. While other researchers have identified the river Lopnas with Aghstev, situating Khaghkagh in the place of city Ghazakh (situated on the bank of that river) or in the surrounding area. Researchers have carried out a novel study, which identifies the river Lopnas with river Hakhum, thus introducing an accurate location of Khaghkagh.